Իններորդ հաղորդում

Իսրայելի զավակները թագավոր չունեին, և ամեն ոք անում էր այն, ինչ իր իսկ աչքին էր ճիշտ

Գրվածքների ընթերցում. Դտվ 2:10-18, 3:7-15, 8:33-35, 10:6-7, 13:1, 17:5-6, 18:1, 30-31, 19:1, 21:25

I. Իսրայելն իր դեգրադացիայի ժամանակ կառավարման, երկրպագության և բարոյականության առումներով քառսային դարձավ՝ Դտվ 3:7-15, 8:33-35, 13:1, 17:5-6, 18:30-31.

Ա. Այն բանից հետո, երբ Իսրայելի զավակները տիրեցին երկրին՝ որպես իրենց ժառանգության, նրանք չհնազանդվեցին Քանանում բնակվող յոթ ցեղերն ամբողջությամբ վտարելու և ոչնչացնելու Աստծու հրամանին՝ 1:27-36:

Բ. Արդյունքում Իսրայելի զավակները ծառայում էին նրանց աստվածներին՝ այդպիսով Տիրոջ աչքին չարիք գործելով՝ 2:10-18:

Գ. Իսրայելի զավակները թողեցին իրենց հայրերի Տեր Աստծուն, ով նրանց դուրս բերեց Եգիպտոսի երկրից, և հետևում էին իրենց շուրջը եղող մարդկանց աստվածներին. նրանք խոնարհվում էին նրանց առջև և բարկացնում Եհովային՝ 10:6-7:

Դ. Աստված նրանց կեղեքիչների ձեռքը մատնեց ու նրանց մատնեց (բոց՝ վաճառեց) իրենց թշնամիների ձեռքը, որպեսզի այլևս չկարողանան կանգնել. երբ էլ նրանք դուրս էին գնում, Տիրոջ ձեռքը նրանց դեմ էր լինում չարիքի համար՝ 2:11-15:

Ե. Դատավորների դարաշրջանը կարելի է համարել Իսրայելի պատմության ամենախավար ժամանակահատվածը. դա նաև ողբերգության ժամանակահատված էր:

Զ. Այդ ժամանակ Իսրայելի զավակների միջավայրում ապստամբություններ կային Աստծու դեմ, կռապաշտություն (գգ. 17–18), ներքին հակամարտություն (գ. 9), թշնամանք և վեճ ցեղերի միջև (գգ. 20–21), պոռնկություն (գ. 19), աղտեղություն, դաժան սպանություններ և տարատեսակ չարագործություն:

II. «Այդ օրերին Իսրայելում թագավոր չկար. ամեն ոք անում էր այն, ինչ իր իսկ աչքին էր ճիշտ»՝ 21:25.

Ա. Երբ Իսրայելի ժողովուրդն ասաց, որ իրենց միջավայրում թագավոր չկա, դա նշանակում էր, որ նրանք Աստծուն և Նրա կարգավիճակը չեղարկել էին և Աստծու թագավորումը չէին ընդունում՝ 17:6, 18:1, 19:1:

Բ. Թեև Աստծու խորանը Սելովում էր, և քահանայապետն ուներ Ուրիմն ու Թումիմը, Իսրայելում կառավարություն, ղեկավարություն չկար, որովհետև Իսրայելն Աստծուն և Նրա՝ որպես իրենց Թագավորի

կարգավիճակը չեղարկել էր, և ուստի Դատավորացում Աստծու արտահայտությունը չկար՝ Դտվ 18:31, Ծնդ 28:30, ծթգ 1:

Գ. Քանի որ դատավորների օրոք Իսրայելում թագավոր չկար, Իսրայելի զավակներն անում էին այն, ինչ իրենց իսկ աչքին էր ճիշտ, և արդյունքում նրանք փչացան և ապականվեցին՝ Դտվ 17:6, 18:1, 19:1, 21:25.

1. Մովսեսն իսրայելացիներին ասաց, որ երբ նրանք մտնեն բարի երկիրը, չպետք է անեն այն, ինչ ճիշտ է իրենց իսկ աչքին, այլ ոչ թե Աստծու՝ Երկ Օր 12:8-14:
2. Սատանան իսրայելացիներին ստիպեց անել այն, ինչ իրենց իսկ աչքին էր ճիշտ, լինել անօրեն ու անաստված և դեն նետել Աստծու՝ հետ պահող ներգործությունը, սա բացահայտված է Դտվ 17–18 գլուխներում, 19:1 և 21:25-ում:
3. Քրիստոնյաներն այսօր հաճախ են ասում, որ իրենց համար որոշակի բան ճիշտ է կամ սխալ. ապրել այսկերպ նշանակում է անել այն, ինչ մեր իսկ աչքին է ճիշտ:
4. Սարսափելի է, եթե մենք անում ենք այն, ինչ մեր իսկ աչքին է ճիշտ. մենք պետք է անենք այն, ինչ Աստծու աչքին է ճիշտ՝ Երկ Օր 12:8:

Դ. Երբ Իսրայելում թագավոր չկար, իշխանություն էլ չկար, և մարդիկ պարզապես անում էին այն, ինչ իրենց համար էր հաճելի. ներկա չար դարաշրջանի իրադրությունը հենց այսպիսին է թե՛ աշխարհում, թե՛ քրիստոնեությունում՝ որպես կրոնական համակարգում՝ Եփս 2:2, 12:

Ե. Տիրոջ վերականգնման համար մենք պետք է ազատվենք Դատավորաց գրքում պատկերված անօրենությունից և Աստծու թագավորությունում ապրենք Աստծու իշխանության ներքո և Աստծու կամքը կատարենք՝ Տտս 2:14, Գղտ 1:4, Մտթ 6:10:

III. Աստված դարաշրջանների Թագավորն է՝ Նա, ով հավիտենապես ունի բացարձակ իշխանություն, Նա, ով երբեք չի փոխվում՝ Ա Տմթ 1:17.

Ա. Աստված, ում մենք հավատում ենք և ում ծառայում ենք, և ով մեր մեջ է բաշխվում, դարերի Թագավորն է, հավիտենության Թագավորը՝ խ. 17, Բ Կրթ 13:14:

Բ. Քրիստոսը ծնվել է, որպեսզի Թագավոր լինի՝ Կառավարիչ, ով հովվելու է Աստծու ժողովրդին, և Նա հիմա թագավորների Թագավորն է և տերերի Տերը՝ Մտթ 2:2, 6, Հյտ 19:16, 17:14.

1. Որպես Թագավորը՝ Քրիստոսը Եհովա Աստված է, ինչպես նաև մարդ՝ Սղմ 24:8, 10:
2. Մենք պետք է գիտակցենք, որ Քրիստոսը մեր Թագավորն է, ով թագավորում է մեր սրտերում, և ընդունենք Քրիստոսի թագավորումը տեղական եկեղեցիներում, որտեղ մենք ապրում ենք Նրա թագավորման ներքո՝ Եփս 3:17, Ա Տմթ 3:15, 6:15:
3. Քրիստոսը գալու է որպես փառքի Թագավորը՝ զորքերի Եհովան, պատրաստված Եռամեկ Աստված՝ մարմնավորված հաղթական ու

եկող Քրիստոսի մեջ, ով թագավորելու է Աստծու հավիտենական թագավորությունում՝ Սղմ 24:7-10:

4. Քրիստոսը Դավթի գահին նստած Իր թագավորության վրա կիշխի նախ՝ հազարամյայում, իսկ հետո՝ նոր երկնքում և նոր երկրում հավիտյան՝ Եսյ 9:7, Ղկս 1:33, ծթգ 1:
5. «Այդժամ սիրո հոգածությամբ մի գահ կհաստատվի, և դրա վրա ճշմարտության մեջ Մեկը կնստի Դավթի վրանում»՝ Եսյ 16:5.
   ա. Դավթի վրանում Քրիստոսի թագավորելը խորհրդապատկերում է սփոփանք, խրախուսանք և վերստեղծում:
   բ. Քրիստոսի գահը հաստատվելու է սիրո հոգածության, քնքուշ մտերմության ոլորտում, և Նա ճշմարտության մեջ կնստի Իր գահին, այսինքն՝ ճշմարտացիության և հավատարմության մեջ՝ խ. 5:
   գ. Եթե մենք թույլ տանք, որ Քրիստոսը թագավորի մեր մեջ՝ բերելով թագավորությունը սիրո հոգածությամբ, ճշմարտացիությամբ, հավատարմությամբ, արդարադատությամբ և արդարությամբ, կդառնանք նույնը, ինչ Նա է այս առաքինություններում՝ խ. 5:

IV. Մենք պետք է փրկվենք անօրենությունից և անօրենության մշակներ լինելուց և անենք այն, ինչ Աստծու աչքին է ճիշտ՝ հնազանդվելով Աստծուն ծառայելու սկզբունքին՝ Տտս 2:14, Մտթ 7:21-23.

Ա. Անել այն, ինչ մեր աչքին ճիշտ է, անօրենություն է՝ Դտվ 21:25.

1. «Մեղքն անօրենություն է», հետևաբար անօրենությունը մեղք է, կամ, ընդհակառակը, մեղքն անօրենությունն է՝ Ա Հվի 3:4.
   ա. Ա Հվի 3:4-ում «անօրենությունը» կամ առանց օրենքի լինելը նշանակում է առանց մարդու վրա Աստծու իշխանության սկզբունքի լինել և չենթարկվել այդ սկզբունքին:
   բ. Մեղանչել նշանակում է լինել առանց օրենքի, օրենքի դեմ հանցանք գործել:
   գ. Աստծու աչքին մարդը մեղանչում է, երբ գործում է իր իսկ բնության և դիտավորության համաձայն՝ քայլելով ըստ սեփական կամքի և ապստամբելով Աստծու իշխանության դեմ:
   դ. Անօրենությունն Աստծու իշխանությունը չընդունելը և դրան չենթարկվելն է:
   ե. Անօրենություն կիրարկել նշանակում է ապրել մի կյանքով, որը խախտում է Աստծու՝ մարդու վրա իշխանության սկզբունքը և չի ենթարկվում այդ սկզբունքին. ներկա դարաշրջանը լի է անօրենությամբ ու ապստամբությամբ:
   զ. Անօրենության պայմաններում մարդը ոչ միայն ապստամբում է իշխանության դեմ, այլև այնպես է գործում, որ կարծես օրենք չկա:
2. Որպեսզի Քրիստոսն Իր համար հատուկ ժողովուրդ մաքրագործի

որպես Իր հատուկ սեփականությունը, Նա Իրեն տվեց՝ մեզ ամեն անօրենությունից փրկագնելու համար՝ Տտս 2:14:

Բ. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողն է երկինքների թագավորությունը մտնելու, այլ նա, ով երկինքներում եղող Իմ Հոր կամքն է կատարում»՝ Մտթ 7:21.

1. Տիրոջը կանչելը բավարար է փրկվելու համար, սակայն երկինքների թագավորությունը մտնելու համար նաև անհրաժեշտ է երկնային Հոր կամքը կատարելը՝ Հռմ 10:13, 12:2, Մտթ 12:50, Եփս 5:17, Կոլս 1:9:
2. Քանի որ երկինքների թագավորությունը մտնելու համար պահանջվում է երկնային Հոր կամքը կատարել, սա ակնհայտորեն տարբերվում է վերածննդի միջոցով Աստծու թագավորությունը մտնելուց՝ Հվի 3:3, 5.
   ա. Մարդն Աստծու թագավորությունը մտնելու հնարավորություն է ստանում աստվածային կյանքից ծնվելու միջոցով՝ 1:12-13, 3:5-6:
   բ. Մարդը երկինքների թագավորությունը մտնելու հնարավորություն է ստանում աստվածային կյանքով ապրելու միջոցով՝ Մտթ 7:21, 12:50:

Գ. Տեր Հիսուսը նախատեց նրանց, ովքեր մարգարեանում էին, դևեր դուրս քշում և Իր անունով զորության գործեր անում, որովհետև որպես «անօրենություն գործողներ»՝ նրանք այդ բաներն անում էին իրենցից, ոչ թե Աստծու կամքին հնազանդվելուց՝ 7:23.

1. Տիեզերքում կա երկու սկզբունք. Աստծու իշխանության սկզբունքը և Սատանայի ապստամբության սկզբունքը՝ Գործ 1:7, Եսայ 14:13-14.
   ա. Մենք չենք կարող մի կողմից Աստծուն ծառայել, իսկ մյուս կողմից՝ բռնել ապստամբության ուղին. մենք պետք է շրջվենք անօրենության սկզբունքից և մերժենք ապստամբության ուղին՝ Մտթ 28:18, Հդ 11:
   բ. Աստծուն ծառայելը անմիջականորեն կապված է Նրա իշխանության հետ. եթե մենք իշխանության հարցը չլուծենք, մեր ծառայության բոլոր ոլորտներում խնդիրներ կունենանք:
2. Թող Տերը մեր ծառայությունը պահի Աստծու իշխանությանը և Հոր կամքին ենթարկվելու սկզբունքի ոլորտում՝ Գործ 1:7, Մտթ 7:21, 12:50:

V. Դատավորաց գրքում կառավարության, երկրպագության և բարոյականության մեջ եղող քաոսը պատկերում է հին ստեղծագործության մեջ եղող սատանայական քաոսը՝ Ծնդ 3:1-5, Հյտ 20:10–21:4.

Ա. Տիեզերքը քաոսի վիճակում է. այս քաոսն այսօր աշխարհում չարչարանքի աղբյուրն է, և քանի դեռ ստեղծագործության մեջ քաոս է, աշխարհում չարչարանքներ կլինեն՝ Հռմ 8:18-22:

Բ. Տիեզերքի պատմությունն Աստծու տնտեսության և Սատանայի քաոսի պատմություն է՝ Ծնդ 1:1-2, 26, Հյտ 20:10–21:4.

1. Սատանան՝ բանսարկուն, չար քաոսի աղբյուրն ու տարրն է՝ Մտթ 16:23, Հյտ 2:9-10, Բ Կրթ 2:11, Ա Պտ 5:8:
2. Աստված Ինքն աստվածային տնտեսությունն է, և Նա մտել է մեր մեջ որպես ղեկավարում, տնօրինում և ծրագրում, որպեսզի ամեն ինչ կարգի բերի՝ Եփս 1:10, 3:10:
3. Աստվածաշնչում և մեր փորձառությունում սատանայական քաոսը միշտ զուգորդվում է աստվածային տնտեսության հետ և իրականում օգնում Աստծու տնտեսությանը՝ խ. 9:

Գ. Որպես նրանք, ովքեր ապրում են քաոսի, ապստամբության և անօրենության միջավայրում, մենք պետք է Աստծու տնտեսության հստակ տեսություն ունենանք՝ Սղմ 2:1-6, Առկ 29:18ա, Եփս 3:9.
1. Մենք պետք է կառավարվենք, վերահսկվենք և ուղղորդվենք այս տեսությամբ՝ Գրծ 26:19:
2. Մենք պետք է Աստծու տնտեսության, Աստծու հավիտենական կամքի տեսության առնչությամբ ուժեղ և անսասան լինենք՝ Եփս 1:10, 3:9, Հյտ 4:11, Ա Կրթ 15:58, Եբր 12:28:

Դ. Հաղթողները հաղթահարում են հին ստեղծագործության մեջ եղող սատանայական քաոսը և նոր ստեղծագործության համար իրագործում աստվածային տնտեսությունը՝ Ա Տմթ 1:4, Եփս 1:10, 3: 9-10, Բ Կրթ 5:17, Գղտ 6:15.
1. Հաղթողները սատանայական քաոսից չեն ազատվում. փոխարենը նրանք հաղթահարում են կործանարար սատանայական քաոսն ու հաղթանակում են կառուցողական աստվածային տնտեսությունում՝ Ա Տմթ 1:3-4, 19-20, 4:1-2, Տտս 3:10, Բ Տմթ 1:15, 4:8:
2. Քաոսից տառապելուն զուգընթաց հաղթողները համակվում են «զորությամբ.... այն շնորհքի մեջ, որը Քրիստոս Հիսուսի մեջ է» (2:1) և ունակ են լինում կանգնելու աստվածային տնտեսության համար և կյանքով արտահայտելու այն՝ 1:10-15, 3:14-17, 4:2, 5, 7, 18:

©2021 *LivingStreamMinistry*